***Կարգապահական գործ թիվ ԿԳ-16197***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի մարտի 27-ի թիվ 49-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/33-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ դիմող Ռուզաննա Տեր-Վարդանյանի,

քննության առնելով փաստաբան Արամայիս Մելքոնյանին (արտոնագիր թիվ 583) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

Փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը **(այսուհետ նաև Դիմող)՝** դիմելով Պալատ հայտնել է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործով ինքը հանդիսանում է հայցվոր, իսկ փաստաբան Արամայիս Մելքոնյանը ներկայացնում է այդ գործով պատասխանողների շահերը: Դիմողը հայտնել է, որ վերը նշված քաղաքացիական գործով պատասխանողների կողմից 16.05.2016թ. դատարանի գրասենյակ է մուտքագրվել դատավոր Ս. Հովսեփյանին ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն, որում նշվել է, որ դատավորն իբր հայցվորի մտերիմն է, ինչի հետ կապված էլ դատարանը բավարարել է հայցվորի կողմից ներկայացված հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը: Դիմողը նշել է, որ 13.06.2016թ. նշանակված դատական նիստի ժամանակ պատասխանող կողմը և նրա ներկայացուցիչ, փաստաբան Արամայիս Մելքոնյանը պնդել են ինքնաբացարկի վերոնշյալ միջնորդությունը: Դիմողի պնդմամբ՝ փաստաբան Արամայիս Մելքոնյանը դատարանին հայտնել է, որ երբ ինքը զանգահարել է Դիմողին, Դիմողն իրեն ասել է, որ թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործը քննվող դատավոր Ս. Հովսեփյանը Դիմողի ընկերուհին է և Դիմողի օգտին է կայացնելու թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործով

վճիռը: Դիմողը նշել է, որ փաստաբան Արամայիս Մելքոնյանը դատական նիստի ընթացքում նման տեղեկություն հաղորդելով՝ զրպարտել է Դիմողին, քանի որ ըստ Դիմողի՝ ինքը փաստաբան Արամայիս Մելքոնյանին նման բան չի ասել:

Դիմողի հաղորդման հիման վրա Պալատի նախագահի 22.08.2016թ. թիվ 373-Ա/ԿԳ-16197 որոշմամբ՝ փաստաբան Արամայիս Մելքոնյանի (արտոնագիր թիվ 583) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.3 ենթակետի խախտման հատկանիշներով:

Դիմողի և Պատասխանողի կողմից ներկայացված բացատրություններում, մասնավորապես՝ Պատասխանողի կողմից 16.08.2016թ. ներկայացրած գրավոր բացատրությունում, Դիմողի կողմից 13.09.2016թ. ներկայացրած առարկությունում, կողմերը հայտնել են, որ Ռուզաննա Տեր-Վարդանյանը հայց է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Արամայիս Մելքոնյանի՝ իրեն զրպարտելու համար հրապարակայնորեն ներողություն խնդրելու, դրամական փոխհատուցման, ինչպես նաև դատական ծախսերի փոխհատուցման պահանջների մասին: Հայցադիմումն ընդունվել է վարույթ և գործին տրվել է թիվ ԵԱՆԴ/2639/02/16 համարը: Խորհրդին ներկայացվել է նաև նշված հայցադիմումի պատճենը: 27.03.2017թ. Պատասխանողը Խորհրդին ներկայացրել է բացատրություն, որով խնդրել է մերժել Դիմողի անհիմն բողոքը կամ կասեցնել վարույթը մինչև իրենց միջև քննվող գործերի ավարտը: Դիմողը ներկայացրել է 27.03.2017թ. առարկություն կարգապահական գործի վարույթի կասեցման դեմ, քանի որ ինքը գտնում է, որ իր կողմից ներկայացված հեռախոսային խոսակցության ձայնագրության կրիչներով հիմնավորվում է, որ Պատասխանողը զրպարտել է իրեն, բացի այդ ինքը գտնում է, որ թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործը քննող դատավորն ի սկզբանե դրսևորել է կանխակալ վերաբերմունք Պատասխանողի նկատմամբ:

***Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.***

Ուսումնասիրելով ներկայացված բացատրությունները, առարկությունները, ներկայացված հայցադիմումը՝ Խորհուրդը գտնում է, որ թիվ ԿԳ-16197 կարգապահական գործի վարույթը ենթակա է կասեցման հետևյալ պատճառաբանությամբ.

Կողմերի ներկայացրված բացատրություններից, առարկություններից, ինչպես նաև Խորհրդին տրամադրված հայցադիմումի պատճենից պարզ է դառնում, որ Ռուզաննա Տեր-Վարդանյանը հայց է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Արամայիս Մելքոնյանի, որով խնդրել է պարտադրել պատասխանող Ա. Մելքոնյանին հրապարակայնորեն հերքել իր կողմից թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործով 13.06.2016թ. կայացած նիստի ժամանակ դատավոր Ս. Հովսեփյանին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու ժամանակ արտահայտած այն միտքը, թե Ռուզաննա Տեր-

Վարդանյանն իբրև Արամայիս Մելքոնյանին հեռախոսով ասել է, թե դատավոր Ս. Հովսեփյանն իր ընկերուհին է և իր օգտին վճիռ է կայացնելու, քանի որ Արամայիս Մելքոնյանի կողմից դատարանին հայտնած վերոնշյալ տեղեկությունն իրականությանը չի համապատասխանում:

Սույն կարգապահական վարույթը հարուցվել է փաստաբան Արամայիս Մելքոնյանի կողմից՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործով 13.06.2016թ. տեղի ունեցած դատական նիստի ընթացքում գործով հայցվոր, փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանի վերաբերյալ դատարանին գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն (այն է՝ Արամայիս Մելքոնյանը դատարանին հայտնել է, որ *«երբ ինքը զանգահարել է Ռուզաննա Տեր-Վարդանյանին, վերջինս ասել է, որ դատավոր Ս. Հովսեփյանն իր ընկերուհին է և իր օգտին վճիռ է կայացնելու»)* ներկայացնելու արարքի կատարումը ստուգելու նպատակով:

Այսինքն, սույն կարգապահական գործով և թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործով ապացուցման ենթակա են միևնույն փաստական հանգամանքները, այն է՝ արդյոք փաստաբան Արամայիս Մելքոնյանի կողմից դատարանին հայտնած տեղեկատվությունը, այն մասին, որ «երբ ինքը զանգահարել է Ռուզաննա Տեր-Վարդանյանին, վերջինս ասել է, որ դատավոր Ս. Հովսեփյանն իր ընկերուհին է և իր օգտին վճիռ է կայացնելու» համապատասխանում է իրականությանը, թե ոչ:

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 26-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ *նախապատրաստողը պարտավոր է կասեցնել կարգապահական վարույթը, եթե՝…անհնարին է տվյալ կարգապահական գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը*:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ առկա է Կարգի վկայակոչված կանոնի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմ, քանի որ Արամայիս Մելքոնյանին պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկումը հնարավոր կլինի իրականացնել միայն թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործով ձեռքբերված և հաստատված հանգամանքների պայմաններում:

Պալատի խորհուրդը գտնում է, որ անհնարին է փաստաբան սույն կարգապահական գործի քննությունը, մինչև թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործի ավարտը:

Կարգի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթը կասեցվում է Պալատի նախագահի որոշմամբ՝ իր նախաձեռնությամբ կամ կողմի կամ Նախապատրաստողի առաջարկով, իսկ Պալատի խորհրդում գործի քննության ժամանակ՝ Պալատի խորհրդի որոշմամբ:*

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 26-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 2-րդ մասի պահանջներով, Պալատի խորհուրդը,

## *Ո Ր Ո Շ Ե Ց՝*

***1. Փաստաբան Արամայիս Մելքոնյանի (արտոնագիր թիվ 583) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը (կարգապահական գործ թիվ ԿԳ-16197) կասեցնել մինչև թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործով վերջնական որոշում կայացնելը:***

***2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

ՀՀփաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյան